

Ա Ռ Ա Ք Ե Ա Լ Ը*)

Է.

Կէս գիշեր էր որ գնացքը կանգ առաւ Աղստե
կայարանի առաջ: Ղազարս ու Դիլիջան գնացողների
թուում՝ իջաւ գնացքից և Պետրոս Կամսարեանը: Ուղե-
ւորներին իրենց ծառայութիւնն առաջարկող կառապան-
ները մօտեցան, նա և, վերջինիս և սկսած գովել՝ մէկն
իւր «Թռչկան ձիերը», միւսն՝ իւր «սլող կալասկան»,
երրորդն՝ իւր «գինջ օմնիբուսը» և այլն և այլն:

Պետրոսն, ինչպէս յարմարութիւններ սիրող մարդ,
չէր կամենում փոստի սայլակով ճանապարհորդել, որ-
պէս զի չենթարկուի կայարանների քմահաճութիւն, այդ
պատճառով էլ ընտրեց «սլող կալասկան», թէպէտ հաս-
տատ չը գիտէր թէ՛ որքան է նա յարմար առաջիկայ
ճանապարհորդութեան համար: Եւ որովհետեւ օմնիբու-
սի, կամ ուրիշ կառքերի տէրերը վախեցնում էին նրան
ասելով՝ «էդ կալասկան էդա ճամպի միջումը կտորու-
լու ա, քէ էլ թողի արևումը խաշուելիս և այլն», ուս-
տի երիտասարդը սկսաւ կասկածել թէ՛ մի գուցէ սխա-
լուել է իւր ընտրութեան մէջ:

— Սուտ են ասում, աղա-ջան, քէ վախեցնում են որ
իրանց փայտօնը բռնես, առարկում էր «կալասկի» տէրը
և աւելացնում. — Իմ կալասկէն կըլի չորս տարի որ բա-
նացնում եմ, հլա պոունդը վնասուել չի: Հրէն մէկ էլ
օրը պրիտաւալին տարայ Ղազարս, ընդիւսն էլ նաջալնի-
կին դիւս բերի Դիլիջան, բա խի՞ չը կտորուեց: Հլա նա-

*) Յետ «Լուսնայ» 1902 № 3.

չալնիկն էլ ասեց. «մալադեց Օվանես, տվոյ կալասկա-
օջեն խարօշի»:

Պետրոսն, անշուշտ, երկար կը մնար երկբալու-
թեան մէջ, եթէ նրան օգնութեան չը հասնէր կարճա-
հասակ մի մարդուկ, որն, ըստ երևութին, ծանօթ էր
տեղական կառապանների սովորութեան ու հնարներին:

— Աղա՛, էս մարդի կալասկէն լաւն ա. իսկի սիրտդ
շաք (կասկած) մի գցիլ, նստիր ու գնա՛: Դու թէ ամեն
խօսողի լսես, էրկու օր կըմնաս ըստեղ, տասց նա բա-
րեկամաբար:

— Ա՛յ քու հերը լիս դառնայ, ըտենց խօսա՛ ք,
ուրախացաւ Օվանէսը և ապա դառնալով Պետրոսին՝ ա-
ւելացրեց. Տես, աղա՛, սա վարժապետ մարդ ա, կա-
րալ չի սուտ խօսայ. որ ասում ա իմ կալասկէն լաւն
ա. իմաց որ լաւն ա:

— Շատ բարի. գնա՛, լծիր. կարգադրեց Պետրոսը,
նախապէս վարձագինը որոշելով: Ապա դառնալով մի-
ջամտող մարդուկին՝ հարցրեց. — Որտեղի վարժապետ էք:

— Դիլիջանից գէնը հայի գեղ կայ, ընդեղի վար-
ժապետն եմ:

— Ուրեմն դուք էլ դէպի Դիլիջան էք գնում:

— Հրամանք ես:

«Սա կարող է լաւ առաջնորդ լինել ինձ», մտածեց
Պետրոսը և առաջարկեց նրան՝ ընկերանալ իրեն:

— Ձէ, տղա՛, ես փուրգօնով պէտք ա գնամ, ա-
ռարկեց վարժապետը:

— Ինչո՛ւ, միթէ կառքը աւելի հանգիստ չէ:

— Հալբաթ որ (ի հարկէ) հանգիստ ա, ծիծաղեց
վարժապետը:

— Ինչո՛ւ ուրեմն չէք գալիս:

— Բա գեղի վարժապետը ո՞րդիան կարալ կառքի
փող տալ:

— Ի՞նչ փող, ես փող չեմ ուզում:

— Բա ո՞նց:

— Հէնց այնպէս, ձրի: Ես, մի և նոյն է, կառքի փողը պիտի վճարեմ. շատ ուրախ կլինեմ, եթէ դուք էլ ինձ ընկերանաք:

Վարժապետը քաշուով էր և չէր կամենում երիտասարդի առաջարկութիւնն ընդունել:

— Ա, շա՛շ, խի ես մտի մնացել, լաւ բանը գլուխդ վեր չ'ունում. նկատեց վարժապետին Ղազարեցի ծանօթներէն մինը:

— Դէ խի չի վեր ունում, ասում եմ, ծանդրութիւն չըլեմ ադի հմար:

— Ոչինչ, ծանրութիւն չես լինիլ, դնանք, ասաց Կամսարեանը և իրեղէնները լանձներով բեռնակրիչ, առաջ անցաւ:

Մարդուկը հետեց նրան:

Կառապանը, որ մի քանի վայրկեանում արդէն «կալասկէն» լծել, բերել էր կալարան, ժողովեց իսկոյն Պետրոսի իրեղէնները և կառքի ետքին դարսելով՝ ըսկըսաւ ամբացնել: Այլա իմանալով որ վարժապետն ևս ընկերանում է «աղին», նրա խեղճ կապոյն էլ տեղսուրեց մի խորշում: Յետոյ բարձրանալով իւր նստատեղը, ասաց.

— Ես իմ Աստօժը, ադա, լաւ ընկեր ես վե կալել, արժանաւոր մարդ ա. ըտենց ընկերի հետ գնացած ճանապարհն էլ բարի կըլնի:

— Հապա. ես վատ մարդ կընկերացնեմ ինձ, պատասխանեց Կամսարեանը և կառքը բարձրացաւ:

— Տենձում ես, վարժապետ. լաւութիւնը չի կորչում. նորէն խօսեց Օվանէսը, դու որ ինձ հմար բարեխօս չէիր ըլել, Աստօժ էլ քէ էս բանին աաստ չէր բերիլ, փուրգօնի ճռճուոցից ազատուեցար, ութ աբասին էլ մնաց ջէբումդ:

— Լաւ, մի երկարացնիր, քչիբ տեսնենք, նկատեց

Կամսարեանը՝ զգալով որ կառապանի խօսքերը անհաճոյ պիտի լինին վարժապետին.

—Քշիլ տեմ, աղա, բա քշիլ չըպտեմ, քե ընենց լեղով (շուտով) տանեմ որ նաշալնիկի պէս ասես՝ «մալադեց Օվանես»:

Այս ասելով՝ կառապանը շարժեց սանձերը, խրատուսեց ձիաներին և կառքը սլացաւ խճուղու ուղղութեամբ:

Լոյսը բացուած չըլինելով՝ գիշերալին զովը զգալի էր դեռ: Պետրոսը փաթաթուելով վերարկուի մէջ՝ կրճկուեցաւ կառքի անկիւնում և սկսաւ խօսակցել վարժապետի հետ:

—Ձեր անունն քնչ է, հարցրեց նա:

—Քեզ ծառայ՝ Մօսի, պատասխանեց վարժապետը:

—Չասացիք, որ գիւղի վարժապետն էք:

—Չբուխու:

—Չիբուխու: Դա հայոց գիւղ է:

—Հայոց ա, բա՛ քնչ ա:

—Անունը, կարծեմ, հայերէն չէ:

—Հրամանք ես, թուրքերէն ա, ամա մեր վանահայրն սօսում ա, շատ առաջ հայերէն ա ըլել, ձապոտիկ են ասել:

—Վանահայրն ո՞վ է. ձեր գիւղում վանք էլ կայ:

—Չէ, Սևանայ վանահայրն եմ ասում:

—Սևանն, ուրեմն, մօտ է ձեզ:

—Մօտ ա, բա՛, հենց մեր առաջին ա:

Այս նորութիւնը ուրախացրեց Պետրոսին: Որքան ժամանակ էր որ նա փափագում էր տեսնել Գեղամայ ճովակը, որքան լաւ բաներ էր լսել նրա մասին, որքան բաներ կարդացել: Այժմ, ահա, նա կըհասնէր փափաքին:

—Ձեր գիւղում, ուրեմն, ուսումնարան էլ ունիք, շարունակեց նա իւր հարցերը:

—Ուսումնարան սրտիան ա. մի տասը—քսան ըն-
խայ ես եմ հւաքել մեր տունը, կարգացնում եմ... թէ
դրուստն ասեմ. ես էլ ըսկի օրինաւոր վարժապետ չեմ:
Նոյնումը որ էրէցին օգնում եմ, տիրացու-թիւն անում,
էն ա գեղականն անունս վարժապետ ա դրել:

Ուրեմն Պետրոսի ուղեկիցը տիրացու էր և ոչ
վարժապետ: Սրանով էլ պարզոււմ էր երիտասարդի հա-
մար այն հանելուկը որ վարժապետ կոչուածը գիւղա-
կան բարբառով էր խօսում:

Այս նորութիւնը, թէպէտ, որոշ չափով ձգեց ու-
ղեկիցի վարկը Կամարեանի աչքում, այսուամենայնիւ,
վերջինս դարձեալ հետաքրքրուեց նրանով:

—Ո՞րտեղ ես ուսում առել, հարցրեց նա:

—Հրէս, առաջներին գեղ կայ, Քարվանսարայ են
ասում, ընդեղ եմ կարդացել: Ես ինքս էլ Ղազարի գե-
ղերիցն եմ. միան Ձբխլուի էրէցը մեր ազգական էր,
զօռեց, տարաւ իրա կուշար (մօտ), ասաւ՝ ըստի տիրա-
ցու-թիւն պտես անի. ժամանակով էլ քահանայ կշի-
նեմ քե:

—Լաւ գիւղ է Ձիբուխլուն:

—Հլէ մեզ հմար լաւ ա, ուրիշի հմար քնչ գիդամ:

—Որքան ժողովուրդ ունի:

—Իսկը գիտում չեմ. կրլի որ հարիւր լիսուն տուն
ըլի:

—Ի՞նչպէս է որ այդքան տունը չի կարողացել իւր
համար ուսումնարան հիմնել:

Բա գեղականը դ՛ր գիան կարայ ուսումնարան հիմ-
նհ: Սաղ օրը չարչարուելով, արևի, անձրևի հետ կը-
ռիւ տալով ըսկի կարում չի էնքան աշխատի որ իրա
ընխանց ուռզին հասցնի, եա նրանց տկլոր լաշը ծած-
կի, ուսումնարան ո՛նց տի հիմնիլ:

—Իսկ եթէ գտնուի մէկը, որ ցանկանայ իւր ծախ-
քով այդ բանն անել, գիւղացիք հօ չէն հակառակիլ:

— Բն, էդ քնչ ես ասում, աղա-ջան, մարդ իրա աչքը քոն կուզի. գեղացիք չէ թէ չեն հկառակիլ, հլա գհենց մարդու ոտքն էլ կըպաչեն:

Այս գիւղն, ուրեմն, կարժանանալ իմ ուշադրութեան, մտածեց ինքն իրեն Կամսարեանը և շարունակեց.

— Իսկ գիւղատնտեսութիւնն քնչ դրութեան մէջ է ձեր կողմերում:

— Գիւղատնտեսութիւնը ո՞րն ա:

— Վար ու ցանքը, անասնապահութիւնը, գինեգործութիւնը...:

— Վար ու ցանքն էս տարի լաւ ա, տաւարն էլ, փառք Ասծու, ցաւ ու չոռից տգատ ա. ամա դէ գինին մեր կողմերում չի ըլիլ, չուն մեր տեղը սար ա, բաղն արշայ չի գալ, (չի առաջանալ), պտտասխանեց տիրացուն, այլ կերպ հասկանալով իրեն տրուած հարցը:

Այդ հանգամանքը, կարծես, սառեցրեց Պետրոսի հետաքրքրութիւնը և նա այնուհետև սկսաւ աւելի մտածել՝ քան խօսել: Իրա հետեանքը եղաւ այն որ երիտասարդը տաքուկ վերարկուի և զով օդի ազդեցութեան տակ սկսաւ նիրհել: Եւ որովհետև երկաթուղու վրայ շատ քիչ էր քնել, ուստի շուտով էլ քաղցր քուն մտաւ:

Տիրացուն իր կողմից աշխատեց չարթնացնել նրան և քիչ ժամանակից յետոյ ինքն էլ հետեեց նրա օրինակին:

Սակայն Օվանէսի սկալասկէն» շարունակ սլլում էր հարթ խճուղու վրայ: Նա արդէն Ղազախը, Գագկայ դաշտը և Ուղունթալան անցել և Քարյանսարի ճանապարհն էր մտել, երբ Կամսարեանն անուշ քնից արթնացաւ: Աչքերը բանալով նա չորս կողմը նայեց և իրեն շրջապատող տեսարանները դիտելով՝ հիացաւ:

Ճապարհի մի կողմից ընկած էին հասուն ար-

տեր կամ սիգաւէտ արօտներ, որոնք ուղղադիր, կամ վարաւհակ տարածուում, հասնում էին մինչև հեռաւոր բարձրութիւնները. իսկ միւս կողմից կանաչադարձ թուփեր, ձորակներ ու բլուրներ, որոնց հետևում էին՝ նախ մանր ու ծառախիտ և ապա խոշոր, մշտաւատ լեռներ: Դրանց մէջ, իրենց բարձրութեամբ, աչքի էին ընկնում աջ կողմից Նալթէօքանը, իսկ ձախից՝ Կարմիր-քարը՝ իւր երկար լեռնաշղթայով, ապա Համզասարը, Արտազը և այլն, որոնք հետզհետէ իրար յաջորդելով հորիզոնը դարձնում էին վեհ և գեղատեսիլ: Սակայն աջ ու ձախ տարածուող այդ տեսարանների գեղեցկութիւնը պսակում էր Աղստեւի հինաւուրց գետակը, որ շարունակ անծայր խճուղուն ընկերանալով, գուարճացնում էր նրա մշտական անցորդներին մերթ-վճիտ ջրերի քաղցր կարկաչով, մերթ փոքրիկ ջրվեժների փափուկ շառագոյլ և յաճախ՝ իւր եզերքը ծածկող, կամ իւր եղալերներում խմբովին ցոլացող ծառերի պուրակներով: Արևը, որ նոր էր իւր շողերը սփռում Աղստեւի ձորի վրայ, այդ տեսարաններին տուել էր մի դիւթական պայծառութիւն, վառելով մշուշը լեռների լանջերում, կանաչը՝ ծառերի կատարին, դալարը՝ դաշտերի մէջ և ցօղը՝ ծաղիկների վրայ:

—Օհ, ինչ գեղեցիկ և սրբան հրաշալի է մեր երկիրը, բացառանչեց Կամսարեանը՝ հրապուրուելով ընտելեան այդ սիրուն տեսարաններով և ապա ձեռքերն աջ ու ձախ տարածելով՝ կամենում էր, կարծես, հորիզոնը գրկել:

—Ատեղ հլա քնչ գեղեցկութիւն կայ, գեղեցկութիւն, գեղեցկութիւն Դիլիջանայ դէսն ա, Շամլուխի ձորումը, Մայմեխի լնջերին, հրէս գնում ենք, կրտեսնաս, նկատեց տիրացու Մօսին:

Կամսարեանը, որ դեռ քննական աչքով չէր նայել ուղեկցին, որովհետև գիշերանց էր ծանօթացել նը-

րան, թաւ ձայնով արած նրա դիտողութիւնը լսելուց, ինտ նախց մի վարկեան և տեսաւ որ դա մի մարմնացեալ աննորդաշնակութիւն էր նկատմամբ այն պօէզիայի, որ շրջապատում էր իրեն: Տիրացուի կարճ ու գիւրուկ մարմինը, որ նստած լինելու պատճառով կորացել էր, նմանում էր մի տալե մսագնդի, որի վրայ գլուխը շարժում էր, կարծես, առանց պարանոցի: Նրա թուլի դէմքը, որ արեւահար լինելուց աւելի էր սևացել, ծածկուած էր խիտ և երբէք չըսանրուած մօրուքով: Վերջինս թէսլէտ տարածւում էր մինչև նրա այտոսկրները, այսուամենայնիւ, չէր ծածկում տիրոջ մեծ բերանը, որ եզերուած էր հաստ, լրթագոյն շրթունքներով: Խոր ընկած աչքերը, չընայելով իրենց սևութեան, թաւալում էին նեղ կապիճներում առանց կրակի և տրտալատութեան. իսկ դրանց հովանաւորող թաւարծի յօնքերը տալիս էին նրա դէմքին մի առանձին գոեհկութիւն: Հաստ շալի կապան, կեղտոտ օձիքով արխալուխը և մորթէ, տեղ տեղ մազաթափ, գլդակը, որ նա խնամքով քաշել էր հաստ բլթակներով՝ լոշի պէս կախուած ու փոշոտած ականջների վրայ, տիրացուին նմանեցնում էին տնտառաբնակ խոզարածի. նրան պակասում էր մի մահակ՝ ձեռքին և մի պարկ՝ մէջքին:

Պետրոսը ուշի ուշով նայելով ուղեկցի վրայ՝ զգաց այնպիսի մի անհանգստութիւն, որ պաշարում է մարդուն զզուանք զգալուց առաջ: Նա զարմացաւ իւր անմտութեան վրայ որ մի առաջնորդ ունենալու պատճառով՝ նստեցրել էր կողքին այնպիսի մի գոեհկի, որից մինչև անգամ, կեղտի ու քրտինքի հոտ էր փչում: Այս պատճառով երիտասարդն անզգալի կերպով քաշուեցաւ մի կողմ և, որպէս զի տիրացուից աւելի անջատուի, առջևը դրած իրերից մինն առնելով՝ զետեղեց նրա և իւր մէջ տեղը՝ ասելով.

—Սրա մէջ կոտրելու բան կայ, լաւ է այստեղ դնենք:

—Լաւ կըլի, լարեց տիրացուն և ինքն ևս լետ քաշուեց:

Բայց որովհետև Պետրոսին այնպէս թուաց թէ՛ Մօսին հասկացաւ իւր միտքը, ուստի սկսաւ զբողոքներ նրան:

—Ասում ես թէ՛ այն կողմերն աւելի գեղեցիկ են, հա՛:

—Գեղեցիկ են, բա՛, ըստեղ հլա շատ փալը գիւզ ա, արևը որ աշմիշ ա ըլում (բարձրանում է) էն ղայդի ա էրում, որ ասես թէ մարդի կաշի պուկիլ տի. ամա դէնի ճամպէն չիմ մեշալղով (անտառով) ա անց կենում. ոտով էլ որ գնաս՝ մէջքդ տաքանալ չի:

Զընայելով տիրացուի լախարարութեան, Կամսարեանն, այսուամենայնիւ, թերութիւն չէր գտնում շրջապատող տեսարանների մէջ. ընդհակառակը նա որքան յառաջանում՝ այնքան աւելի էր հիանում նրանցով: Մանաւանդ Աղստեի մշտակարկաջ հոստնքը և նրասիրուն, ծառազարդ փերը, գրեթէ, շարունակ զմալլեցնում էին նրան, այնպէս որ մի ժամանակ նա, մինչև անգամ, մոռացաւ տգեղ տիրացուին և ինքն իրեն խօսեց:

—Ահա՛ թէ՛ քնչ տեղեր և քնչ գեղեցկութիւններ են անյայտ մնում մեզ... Իսկ սրանց մէջ ապրող մեր ազգակիցները... չէ՛ որ նրանք էլ ունին գեղեցկութիւններ ու կատարելութիւններ, որոնք անծանօթ են մեզ: Այո՛, պէտք է շնորհակալ լինել բողոքից, որ վերջապէս օգնեց ինձ իմ նուիրական խոստումն իրագործելու, (այդ վայրկենին երիտասարդի հայեացքը հանդիպեց իւր ուղեկցին և նա մի քալ լետ կասեց իւր մտածութեան մէջ՝ աւելացնելով) կամ, գոնէ, ծանօթանալու այս երկրին ու ժողովրդին, որպէս զի համոզուեմ թէ՛ քնչ չափով է հնարաւոր իմ որոշումն իրագործել:

Քիչ ժամանակից յետոյ՝ երիտասարդ Կամսարեանը նստած Քարվանսարայ գիւղի առաջ, կարկաչահոս Աղստեի ափին, մի հովանաւոր ծառի տակ, ախորժակով նախաճաշում և թէյ էր վայելում: Այստեղ արդէն տիրացուն չէր ընկերանում նրան, որովհետև յանդգնութիւն էր համարում ձգուիլ «աղալի» հետ, նա և, նախաճաշի ժամին: Նա համեստութեամբ խոյս էր տուել գէսլի մօտակայ կրտսկը, ուր խոնուած էին Ղազախի զանազան կողմերից գիւղացիներ և նրանց հետ խօսում էր: Տիրացուի այդ վարմունքը դիւր եկաւ Կամսարեանին և համոզեց նրան որ իւր ուղեկիցը այնքան էլ անտաշ գռեհկիւն մէկը չէ: Այդ պատճառով երբ իւր նախաճաշն աւարտեց, կանչեց վերջինիս և առաջարկեց նրան՝ նոյնպէս թէյ առնել և նախաճաշել, իսկ ինքն հեռացաւ մի փոքր շրջագայելու:

Տիրացուն էլ իւր կողմից հրաւիրեց կառապան Օհանէսին: Նրանք երկուսը նստեցին նոյն հովանաւոր ծառի տակ և սկսան վայելել «աղալի» թէյի ու նախաճաշի առատ մնացորդը: Կառապանը տեսնելով որ «աղան», ի միջի ալոց, թողել էր իրենց թէյի համար տասը կըտոր շաքար, այդ համարեց առատասրտութիւն և դրանից էլ եզրակացրեց որ նա «մենծ մարդ պիտի ըլի»:

— Մենծ մարդ ա, բա՛. մենծ որ չը, լէր մենակ կալասկայ կըբռնէր կըգա՛ր, հաստատեց տիրացուն:

— Ես չէ, առանց փողի քէ կոխքին կըգնէր, կը բերէր:

— Ես էլ էդ չեմ ասում:

— Թիւնդ յուսումնական կըլնի, ա՛յ:

— Յուսումնական ա. բա՛:

— Չլի՞ թէ ինժիներ ա:

— Չէ, ինժիներ չի ըւում:

— Բա ի՞նչ եաշչիկը ծանդր ա. ես ընենց եմ 'մանում թէ՛ ինժիների եարաղ կայ միջումը:

— Զէ, կի որ դրեր ըլի:

— Գրերն ինչքն ա պէտք:

— Ո՞նց թէ ինչքն ա պէտք. բա յուսումնականն առանց գրերի ման կըգնոյ:

— Եսմ, (քնչ գիտեմ) հրէն մեր գէրի տղան էլ ասըմեն յուսումնական ա, ամա ճամպա գնալուց՝ արադից սավալի գատ չի ըլում հետը:

— Ե՛, շնչ, դու էլ մարդու անուճ տուիր. գեղի յուսումնականն ու քաղաքինը մի՞ն ա ըլում: Գեղի յուսումնականը սալ կեանքումը հինգ եա վեց գիր անջախ (հազիւ) կարգալ, ամա քաղաքինը՝ աշխարքումս էլ գիր չի թողում չիմ (բոլորը) կարգում պրծնում ա:

Այսպէս զրուցելով տիրացուն ու կառապանը վերջացնում էին իրենց նախաճաշը, երբ Կամսարեանն իւր շրջագալութիւնից վերադառնալով՝ տեսաւ նրանց միասին:

— Այս տիրացուն, իսկապէս, կառապանի ընկերն է, ես ինչո՞ւ եմ լիմարաբար իմ կողքին նստեցրել, մըտածեց նա և որոշեց առաջարկել որ սա այսուհետև նստէ կառապանի մօտ: Բայց քնչպէս անէր առաջարկութիւնը որ տիրացուն չը վիրաւորուէր, նա այդ մասին էլ մտածեց:

Երբ Օվանէսը իւր գահին բազմած՝ կառքը մօտեցրեց «աղին», վերջինս հրամայեց ծածկել հովարանը, որովհետև արևն այրում էր արդէն: Կառապանն իսկոյն կատարեց հրամանը:

— Նախաճաշից լետոյ ես սիրում եմ հանգստանալ. արդեօք չի՞ կարելի պառկել քո կառքում և այնպէս գնալ, հարցրեց Պետրոսը կառապանին:

— Խի՞ չի կարելի. չե՞ս տենում որքան լէն ա իմ կալասկէն: Դու ոտերդ ձգի ու պառկի, վարժապետն էլ իմ կողքին կընստի, պատասխանեց Օվանէսը:

— Հա, ես ըստի կընստեմ, դու մի՞ նեղանալ, յա-

րեց տիրացուն՝ ցոյց տալով կառապանի նստատեղը:

Կամսարեանը հիացաւ այս լաջողութեան վրայ և կառքը բարձրանալով՝ գլխի տակն առաւ փոքրիկ բարձը և ձգուեց նստատեղի երկտրութեամբ:

Տիրացուն սեղմուեց կառապանի կողքին:

Քարվանսարայից ելնելուց՝ Աղստեւը դարձեալ ընկերանում էր ճանապարհորդներին իւր ընդդիմակաց հոսանքով, երբեմն փոքրիկ ձորակներէից անցնելով, երբեմն դաշտերի եզերքը քերելով, իսկ շատ տեղ՝ թումբերի ետեւը թագնուելով: Քանի շարունակուում էր տեսարանների միակերպութիւնը, Կամսարեանը նրանցով չէր հետաքրքրուում, այլ պառկած մտածում էր: Բայց հենց որ հասան Ղլիճ-Ղայայ կոչուած ժայռերի ստորոտին, նա ուղղուեցաւ իսկոյն և գլուխը կառքից դուրս հանելով՝ սկսեց ուշի ուշով դիտել այդ ահաւոր և, մի և նոյն ժամանակ, գեղատեսիլ պարեխները, որոնք ճանապարհի աջ կողմից ձգուելով՝ իրար վրայ դիզուած՝ հետզհետէ բարձրանում և կազմում էին տարօրինակ ամբարտախներ, մի տեղ սուր ու միապաղաղ, միւս տեղ՝ խրոխտ ու բարդ բարդ, իսկ շատ տեղ՝ թեք դէպի ճանապարհը, կարծես, սպառնում էին փլչել ու իջնել բարձր գահաւանդից և իրենց փլուածքի տակ ծածկել այդ տեղի խաղաղութիւնը վրդովող յանդուգն ուղևորներին:

Խարակների այդ ահաւոր ամբարտախներից լետոյ տեսարանը դարձեալ մեղմանում ու դաշտանում էր, իսկ խճուղու մի քանի կեռամաններ անցնելուց՝ հորիզոնը դարձեալ փակում էին նոր, կանաչ սարալանջեր, որոնք հետզհետէ դէպի վեր բարձրանալով՝ ձգուում, հասնում էին մինչև Ղըզղալի սարը:

Մի երկու ժամ այսպէս ճանապարհորդելուց և տարբեր տեսարաններ անցնելուց լետոյ մեր ուղևորներն հասան Քարս-չայ կայարանը, որ գտնուում էր Դի-

գիշանի սարաւանդը հանող բարձրութիւնների ստորոտում:

Որովհետև կառապանը կեր պիտի տար այստեղ ձիերին, ուստի առաջարկեց «աղին» վայելել իւր ճաշը առանց շտապելու:

— Արևն էս սարին թեքելուց՝ կալասկէն կըլծենք հու սարինով (հովով) Դիլի դիւս կը գանք, յայտարարեց նա խորհրդատու եղանակով:

— Ինչո՞ւ այդքան ուշ, հարցրեց Պետրոսը:

— Ուշ չի, աղա՛, էրկան ճամպայ ենք եկել. հայ վաններն էլ խեղճ են. մի քիչ կորմ (կեր) կուտեն, մի քիչ էլ կը դինջանան. հլէ թէ կուգես, մի քիչ էլ դու կը դինջանաս, էնդուց եզը կը լծենք կը գնանք:

Որովհետև երիտասարդը շտապելու ոչինչ չուներ, ուստի չը հակառակուեց: Պատուիրելով որ պաշարի կապոցը տանեն կայարան, (որից ինքը, իբրև մասնաւոր կառքով եկող, հեռու էր իջած), ինքն ևս իւր քայլերն ուղղեց դէպի այդ մենաւոր տունը, որ հովանաւոր պատշգամ և շուրջը ծառերի ստուեր ունենալու պատճառով՝ արևի այդ տաք ժամանակը դէպ իրեն էր քաշում խոնջ ուղևորին:

Կայարանի վերակացուն ձեռքը լրագիր առած կարգում էր, երբ Կամսարեանը մօտեցաւ սանդուխներին:

— Կարելի է մի քանի վայրկեան հանգստանալ այստեղ, հարցրեց նա ուսերէն լեզուով:

— Ինչո՞ւ չէ, համեցէք. պատասխանեց վերակացուն մաքուր հայերէն:

— Այո, ներողութիւն, դուք ուրեմն հայ էք:

— Այո՛, պարոն, զտարիւն հայ. պատասխանեց ժրպտալով վերակացուն, որ միջահասակ, բարեդէմ և, ըստ երևութին, բարեխառն բնաւորութեամբ մի անձն էր:

— Սրուայ այս ժամին՝ որքան անհաճու է բաց ճանապարհը, նոյնքան հաճելի է ձեր այս պատշգամը,



ուր ոչ միայն հովանի, այլ և հանգստանալու լաւ բազմոց ունիք...: Այս ասելով Կամսարեանը մօտեցաւ վերակացուին և ողջունելով նրան՝ նստեց մօտիկ դըրուած, կաշեծածկ ու հնատարազ բազմոցի ծալրին:

— Հրամանքդ, երևի, Դիլիջան էք գնում, հարցրեց վերակացուն՝ մի կողմ դնելով լրագիրը:

— Կարծեմ, աւելի հեռու:

— Աւելի հեռու:

— Թուում է թէ՛ այո՛:

— Ի՞նչպէս թէ թուում է. դուք չէք որոշած թէ՛ ուր էք գնում:

— Համարեա՞ թէ՛ չեմ որոշած:

— Հասկանում եմ. ուրեմն, ճանապարհորդում էք առանց որոշ դիտաւորութեան:

— Ձէ, որոշ դիտաւորութիւն ունիմ:

— Ներեցէք որ հետաքրքրւում եմ... եթէ որոշ դիտաւորութիւն ունիք, ուրեմն պէտք է որ գիտենաք թէ ուր և ինչի՞ համար էք գնում:

— Հենց բանն էլ այդ է որ՝ ինչի՞ համար գնալս գիտեմ, բայց ուր գնալս չըգիտեմ:

— Այդ հետաքրքրական է. լարեց վերակացուն ծիծաղելով և բազմոցի միւս ծալրին նստելով:

Այդ միջոցին տիրացու Մօսին բարձրացաւ պատրդամը՝ բերելով իւր հետ պաշարի կապոցը և խորը գլուխ տալով վերակացուին՝ կանգնեց Կամսարեանի առաջ:

— Օհօ, տիրացու, դու էլ այստեղ, այդ ո՞նց է պատահել, հարցրեց վերակացուն:

— Հա, ես էլ ըստի եմ. շորհակալ եմ, աղան բերաւ:

— Դէ որ եկել ես. ա՛յ էն սեղանը մօտ բեր, հրամայեց վերակացուն:

Տիրացուն ցոյց տուած սեղանը մօտեցնելով բազ:

մոցին, բերած պաշարը դրեց վրան և հեռացաւ. Կամսարեանը բացաւ կապոցը և ունեցածը շարեւրով սեղանի վրայ՝ խնդրեց վերակացուին մասնակցել իւր «համեստ» ճաշին:

— Ծնորհակալ եմ, ես արդէն ճաշել եմ, առարկեց վերակացուն:

— Խնդրում եմ, որքան կարող էք. կամ, գոնէ, մի բաժակ գինի... այս ասելով՝ Կամսարեանը հանեց բաժակը և սրբելով այն՝ լցրեց գինիով և դրեց վերակացուի առաջ:

Վերջինս, որ կայարանում ապրելով՝ սովորած էր անխտիր ամեն ուղևորի ճաշին ու ընթրիքին մասնակցել, երկար չընդդիմացաւ, և կամենալով, ինչպէս ասում էր, իւր հիւրի ախորժակը բանալ, վայելեց մի կտոր բան և գինու բաժակն զգուշութեամբ կիսելով, վերսկսեց ընդհատուած խօսակցութիւնը:

— Հա, այն էի ասում, ձեր պատասխանն ինձ չափազանց հետաքրքրեց... այդ ինչպէս է որ դուք որոշ դիտաւորութեամբ գնում էք մի տեղ, բայց չըգիտէք թէ ո՛ւր էք գնում:

— Իսկապէս գիտեմ թէ՛ ո՛ւր եմ գնում, որովհետեւ գնում եմ մի որ և է հայ գիւղ, բայց թէ՛ որ գիւղ, ահա՛ այդ մէկը չըգիտեմ:

— Ներեցէք, խնդրում եմ, ես դարձեալ չեմ հասկանում:

Կամսարեանը ծիծաղեց և ապա սկսաւ համառօտ կերպով բացատրել թէ՛ ինչ է իւր դիտաւորութիւնը:

Վերակացուն, որ նորէն ձեռքն էր առել բաժակը՝ որպէս զի գինու մնացորդը վայելէ, երիտասարդի բացատրութիւնը լսելուց՝ իսկոյն վայր դրեց այն և բազուկները դէպի վեր պարզելով՝ բացազանչեց.

— Փառք բեզ, Աստուած, վերջապէս գտնուեց մէկը, որ մեր տրտունջը լսեց... ապա դառնալով Կամսարեանին՝ աւելացրեց. — Դուք, ուրեմն միակ մեծ մար-

դըն էք՝ մինչև օրս իրենց ուսումն աւարտած հայ երիտասարդներին մէջ: Թոյլ տուէք ինձ խմել ձեր պատուական կենացը:

Այս ասելով՝ նա յցրեց բաժակը և մի առանձին ոգևորութեամբ պարպեց այն միանուագ:

Կամսարեանին դիւր եկաւ վերակացուի գովասանքը. բայց կամենալով սրա ո՞վ լինելն իմանալ, որպէս զի ըստ այնմ որոշէ իւր ստացած գովասանքի արժէքը, նա հարցրեց.

— Դուք էլ ուրեմն պատկանում էք ուսանողներին դէմ տրտնջող հայերի թուին:

— Հապա:

— Չէի կարծիլ թէ այդ տրտունջը կարտալատուի, նա և, այսպիսի մի լետ ընկած կայարանում:

Վերակացուի դէմքի վրայ դառը ժպիտ խաղաց:

— Ինչո՞ւ չէիք կարծիլ, մեթէ այսպիսի տեղերում ապրող հայ մարդը սիրտ ու զգացմունք չի ունենալ:

— Ո՛չ, այդ չէի ուզում ասել... շփոթուեց Կամսարեանը:

— Հասկանում եմ. ուզում էիք ասել թէ՛ այս լետ ընկած կայարանում, այս անմաքրութեանց դէզերի կոխքին, ձիաների ընկերութեան մէջ ապրող հայ մարդը, ինչո՞ւ պէտք է տեղեակ լինի մեր ցաւերին այնքան, որ նոյն իսկ տրտունջ լայտնէ այդ ցաւերին դարման տանել կարող, բայց չըկամեցող երիտասարդների դէմ:

— Այո՛, համարեա՛, այդ էի ուզում ասել:

— Բայց ես, բարեկամ, ամենից աւելի իրաւունք ունիմ արտնջալու. որովհետև հենց ինքս, մինն եմ եղել այն մարդկանցից, որոնք սիրով նուիրուել են հայ շինականին, կամենալով սովորեցնել նրան խեղճութեան դէմ կռուելու և մարդավայել կերպով ապրելու եղանակը... Բայց իմ ունեցած կարողութիւնը՝ հաւասար չէր իմ ցանկութեան, ուստի չը լաջողեցայ հասնել նըպատակիս:

— Ի՞նչպէս, փող էր հարկաւոր և չունէիք:

— Ոչ, ես վարժապետ էի գիւղում և հէնց այդ պաշտօնի շնորհիւ էլ մօտ լինելով գիւղացուն՝ կարողանում էի օգնել նրան իւր կարիքների ժամանակ, երբեմն խորհրդով, երբեմն գործակցութեամբ, և եթէ երկար մնայի այդտեղ, գուցէ կարողանայի, որոշ օգուտ տալ: Գոնէ, կը կրթէի մի ամբողջ սերունդ այնպէս, ինչպէս որ պէտք էր և այնուհետև այդ սերունդը ինքը կը շարունակէր իմ գործը...:

— Ի՛հ լաւ, ինչո՞ւ երկար չը մնացիք այդտեղ:

— Որովհետև չէի կարող:

— Պատճառը:

— Մեր ուսումնարանական կեանքում նոր փոփոխութիւններ եղան, նոր օրէնքներ հրատարակուեցան: Վարժապետը պէտք է ցենզ ունենար, իսկ ես չունէի, որովհետև թեմական դպրոցն էի աւարտել: Այդ ստանձառով, ահա, ինչ պաշտօնից արձակեցին:

— Եւ յետո՞յ:

— Յետոյ շատ դէս ու դէն ընկնելից վերջը եկայ և այս կայարանում չորքոտանիների վարժապետ դարձայ:

— Հասկանում եմ...:

— Ուրախ եմ որ հասկանում էք. ուրեմն և իրաւունք էք տալիս ինձ՝ տրանջալ այն երիտասարդների դէմ, որոնք բարձր կրթութիւն ստանալով՝ կարողութիւն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, և սակայն այդ ծառայութիւնից փախչում են վատաբար:

— Անշուշտ:

— Դէ՛հ, հենց այդ իրաւունքի հիման վրայ էլ ես ձեզ մեծ մարդ եմ անուանում. որովհետև քաջութիւն էք ունեցել կեանքն արհամարհելով այդպիսի վսեմ նպատակի նուիրել ձեզ.

— Մտորհակալ էս, դուք ինչ բան շարժուցիք. բայց ես դեռ ոչինչ չեմ արել, դեռ նոր եմ որոշում անել:

— Այդքանն էլ բաւական է. դորձի սկիզբը՝ դորձի կէսն է. համենալը՝ կարենալ է. համարեանը, որ մեծ հաճութեամբ էր լսում Կարսի թոսքերը, լանկարձ պահանջ զգաց. վերակացուի բաժակը նորէն լցնելու և պաշարի ընտիր մասերից մի քանի նոր կտոր նրա առաջը դնելու:

— Նեղութիւն մի կրէք, ես շատ ուտողներից չեմ. ասաց վերակացուն և, մի և նոյն ժամանակ, տապակած հաւի մի չաղ կտոր աղ ու պղպեղով համեմելով՝ փաթաթեց լոշի մէջ, ախորժակով վայելեց, ապա լըցուած բաժակը մինչև վերջը դադարկելով՝ շարունակեց. — Տիշըն ասած՝ գեղեցիկ ու բազումաւոր միտք էք լղացել. սարիք, եղբայր, սարիք: Այդ օրինակն, անշուշտ, շատերին կը բերէ ձեր ետեւից. . . . Բայց ասում էք որ դեռ չէք որոշել թէ՛ որ գիւղում պիտի հաստատուիք:

— Այո՛, չեմ որոշել:

— Բայց վատ միտք չէ այն՝ որ ասում էք թէ՛ կը կամենայիք իջնել առաջին սլառահաճ գիւղում:

— Ծշմարիտ.

— Այո՛, ինչ հարկ կայ խտրութիւն գնել գիւղերի մէջ՝ զրանցից ամէն մէկում ապրում են մեր եղբայրներն ու քօյրերը. Ահա՛ հենց բազալի բերմունքով ձեր ճանապարհի վրայ գտնուող առաջին հայ գիւղը ամենից աւելի կարօտ է ձեր խնամքին:

— Ո՛րն է դա:

— Զիբուխուն. մեր հին շապոտիկը:

— Այո՛, նրա մասին լսեցի ես տիբացուից:

— Պէտք է տեսնէք, եղբայր, թէ՛ սրբան բան կայ այդպիսի մի խեղճ գիւղում անելու: Հաւատացած եմ որ շատ պիտի լուգուիք ու վշտանաք՝ տեսնելով այդ տեղի ձեր ազգակիցների զրութիւնը և, մի և նոյն ժա-

մանակ, լիշելով անտարբերութիւն այն մարդկանց, որոնք կարող էին օգնել գիւղացուն իւր վիճակը բարւոքելու բայց չարին, որովհետեւ չը կամեցան:

— Կարճում եմ որ այդ ամենը պիտի ցաւեցնէ ինձ:

— Եւ, մի և նոյն ժամանակ ոգևորէ ու ստիպէ գործել:

— Սնշուշա:

— Եւ երեւակայեցէք թէ՛ որպիսի՛ քաղցր երանութիւն պիտի զգաք մի օր, երբ ձեր աչքով տեսնէք այն ամենը, ինչ որ արել էք, երբ տեսնէք ամային ձեր ձեռքով շէնացրած, աւերակը վերականգնած, խեղճութիւնը խնամուած, տգիտութիւնն ու նրանից յառաջացող չարիքները գիւղից հալածական... երբ տեսնէք թէ՛ թշուառ մի ժողովրդի մասաղ սերունդ ուսուցել ու կրթել էք այնքան որ նա այժմ կարողանում է սեփհական աշխատութեամբ իւր վիճակը բարւոքել, իւր ջանքն ու քրտինքը արդիւնաւոր գործադրել:

Այս եղանակով երկար խօսելով վերակացուն, այնպէս էր քաջալերել ու ոգևորել Կամսարեանին, որ երբ Մօսին եկաւ յայտնելու, թէ՛ կառքն արդէն լծուած, պատրաստ է, նա վեր թուաւ տեղից իսկոյն և, կարծես, շտապելով որ ժամ առաջ հասնէ որոշուած գիւղը և սկիզբը դնէ իւր անունը փառաւորող «մեծ գործին», հարցրեց տիրացուին.

— Գիտես, բարեկամ, որ ձեր գիւղն եմ գալիս:

— Չէ, աղա, գիտում չեմ, պատասխանեց տիրացուն:

— Այո՛, գալիս եմ ձեր գիւղը և, գուցէ, այնտեղ էլ ապրեմ:

— Վա է, զարմացաւ տիրացուն:

— Ի՞նչ վա է, գիւղում ապրել չի՞ լինել. մէջ մը տաւ վերակացուն:

— Խի՛ չիլի, հրէն աշխարհքի կէսը գեղումը չի

ապրհում. ամա դէ, ասըմեմ, աղան քաղաքի սվոր մարդ
ա, գեղումը անց կարայ ապրիլ:

— Կարող եմ, ինչո՞ւ չեմ կարող, հաստատեց Կամ-
սարեանը:

— 'Իէ որ կարող ես, էնա լաւ կըլի էլի... միան
ամօթ լըլի հարցնիլը, ի՞նչ ես ուզում գեղումն ապրիլ:

— Նրա համար որ կարողանայ ձեզ օգնել, ձեզ
բաղդաւորացնել, բացատրեց վերակացուն:

Տիրացուն թէպէտ այդ բացատրութիւնից էլ բան
չըհասկացաւ բայց, կամենալով մի քաղաքավարի խօսք
ասել, շարքով ա գալի, հազար բարով, Աստուած թող
սրտի խորհուրդը կատարի», ասաց ու հեռացաւ:

— Խեղճ մարդիկ... չեն ուզում հաւատալ թէ՛
կըգտնուին աշխարհում անձինք, որոնք երբ և իցէ կը-
հետաքրքրուին իրենց վիճակով, իրենց կեանքի դառ-
նութիւններով և կըկամենան օգնել իրենց՝ առօնց շա-
հտինդրութեան, ասաց Կամսարեանը, գրեթէ լու-
զուած:

— Եւ իրաւունք ունին. որովհետև կեղեքիչներից
ու վաշխառուներից զատ՝ դեռ մինչև այսօր չեն տեսել
ոչ ոքին իրենցմով հետաքրքրուելիս, նկատեց վերակա-
ցուն:

— Որ այգպէս է, մենք կըփոխենք դրանց համո-
զումը, և կստիպենք հաւատալ՝ որ չարերից զատ, կան
աշխարհում, նաև, կարեկից մարդիկ:

— Գնացէք և համոզեցէք, Աստուած թող օրհ-
նէ ձեր ճանապարհը, ասաց վերակացուն և սեղմելով
երիտասարդի ձեռքը, ճանապարհ դրաւ նրան մինչև
կառքը:

Մի քանի վայրկենից Օվանէսի ձիերը թռցնում
էին Կամսարեանին դէպի Գիլիջանի բարձրութիւնները:

Ը.

Արևը մայր մտնելու մօտ՝ մեր ուղևորները հասան ամարանոցի հռչակ վայելող Դիլիջան աւանը:

Այստեղ Կամսարեանը, Օվանէսի ցուցմունքով, հիւրանոցի անուն կրող մի տան մէջ գիշերալին հանգրտարան գտնելուց լետով՝ ելաւ փոքրիկ աւանը գիտելու Փոռոտ խճուղու աջ ու ձախ կողմերում կառուցած երկու կարգ քարաշէն տները, որոնք աւանի ամբողջութիւնն էին կազմում և որոնց մէջ ապրում էին ամարանոց եկողները, հաճելի տպաւորութիւն չարին Կամսարեանի վրայ: Այստեղ նա իսկոյն լիջեց Բորժօմը իւր գեղեցիկ վիլլաներով, մաքուր փողոցներով, ընդարձակ պարկերով, ջրերի առատութեամբ և, առաւել ևս, բնակիչների փայլուն արտաքինով ու գրաւիչ նիստ ու կացով. ուստի և եկաւ այն համոզման որ Դիլիջանը միայն հասարակ մահկանացուների համար կարող է ամարանոց համարուիլ:

Բայց երբ՝ խճուղին երկուստէք փակող՝ շինութիւններից հեռանալով բարձրացաւ դէպի աւանի ձախակողմը ձգուող լեռնալանջը, նրա առաջ բացուեցաւ մի գեղանկար հորիզոն, որ ամփոփում էր իւր մէջ Աղստեի ձորահովիտը՝ իւր կարկաչահոս գետակով, դալար արօտներով, ոսկեփայլ արտերով, իսկ մի փոքր հեռուում՝ խաղաղանիստ գիւղի միաշար տնակներով և նրանց առջև կարգով տարածուող կանաչազարդ բանջարանոցներով: Իւր կանգ առած արօտից քիչ հեռու՝ սկսւում էր եղևնիների խիտ անտառ, որ գնալով տարածւում էր դէպի հեռաւոր լեռների կատարները, որոնց այդ վայրկեանին ոսկեգօծել էին արևի վերջին շողերը: Չորահօվիտը եզերող դիմացի բլուրներից, որոնց ետևը պիտի թագէէր շուտով արևի սկաւառակը, փչում էր ակորժ գեփիւն՝ բերելով իւր հետ կենարար մի զով՝ տո-

գորուած լեռնային օդի, դալարի և ծաղիկների անոյշ բուրմունքով:

Կամօտրեանն սկսաւ լիքը կրծքով շնչել լեռնային թարմ օդը և ինքն իրեն խոստովանել որ փոքր առաջ արած իւր համեմատութեամբ մեծ սխալ է գործել՝ Բորժումը գերադասելով Դիլիջանից: Որովհետեւ նա այժմ տեսնում էր՝ որ եթէ առաջինում արհեստականն է փարթամ, վերջինում, ընդհակառակը, գերազանց է բընականը: Եւ այդ կարծիքի վրայ նա հաստատուեց աւելի, երբ լեռնալանջերից իջնելով՝ մտաւ նորէն աւանը և փոստային կայարանի առաջ բղխող յորդ ու սառն աղբիւրից իւր ծարաւը յագեցրեց: Այդպիսի անոյշ ու բարեհամ ջուր Բորժումն, ի հարկէ, չէր տեսած իւր օրում. ինչպէս և նրա նեղ, կարծես պատնիշափակ, ցերեկը տօթով, իսկ գիշերը՝ խոնաուութեամբ լի խորածորը չէր շնչել երբէք այն թեթեւ ու անոյշ սղոխն ու հովերը, որոնք գիշեր ու ցօրեկ գուրգուրում էին Դիլիի առոյգ լեռնալանջերը:

Բայց արի, տես որ հենց սրա անմահական աղբիւրից քիչ հեռու, փոստային կայարանի և մասնաւոր տների դէպի ձորահովիտը հանող բակերում՝ բլուրի սլէս դիզուած էին տարիների ընթացքում հաւաքուած աղբն ու անմաքրութիւնը, որոնց գարշահատութիւնը ապականում էր ամարանոցի շրջակայ օդը և, սակայն, դրա վրայ ոչ ոք ուշագրութիւն չէր դարձնում:

— Ահա, թէ որտեղ է հարկաւոր մեր միջամտութիւնն ու աղբեցութիւնը... բնութիւնը զարգարել է մեր երկիրը իւր լաւագոյն հարստութեամբ, իւր քրնքոյշ գեղեցկութիւններով և, սակայն մարդկային անճաշակ տգիտութիւնը այլանդակել է նրան անխղճօրէն: Փամանակ է, արդարև, որ մենք մտնենք ամեն անկիւն և տգիտութեան բունները աւերենք ամեն տեղ...

մտածեց՝ Կամյարեանը և իւր նուիրումը անկէսէն իւր շին ստացաւ իւր աչքումս։ Կամյարեանը զրոյստեց ինչ որ Լեւոնեայ առաւօտ՝ դեռ արեւը չըծագած, Կամյարեանը նստած էր Օվանէսի կառքում, որ Հանգիստ սուրում էր Վերականան խճուղիով։ Արեւը ինչ որ Կամյարեանը արեւմտեան կողմից սկսելով՝ անցնում է Մամլուղ գետակի ուղղութեամբ՝ Մայմեխ լեռան ստորոտը ծածկող անտառների միջով և ապա հեռոցհեռէ լեռան լանջերը բարձրանալով՝ պիտի հասնէր մինչև նրա կատարը։ Արեւը դեռ նոր էր Մայմեխ բարձունքը վառում, երբ մեր ուղևորները անցնում էին նրա ստորոտով։ Առաւօտեան գեփիււրը, որ հով էր բերում սարի լանջերից, մեղմով շարժում էր անտառի ծառերը։ Նրանց խուլ շրջիւնը խառնուելով Մամլուխի քաղցր խոխոջի և թռչնիկների ալգածին ճառագիւնի հետ՝ կազմում էր հաճոյական մի ներդաշնակութիւն, որ խանգարում էր երբեմն կառքի կոշտ դղրդիւնով։

Երբ ուղևորները մտնեցին լեռան սկսանդէպի լեռնալանջը բարձրանալ և Մամլուխը ծածկուելով անտառի խորքում՝ սկսաւ իւր խոխոջի խուլ ձայնով ուղեկցել ճանապարհորդներին, տիրացու Մօսին, որ դարձեալ նստած էր կառավանի կողքին, անհրաժեշտ համարեց լիջեցնել «աղին» իւր երէկուայ դիտողութիւնը։

— Միտդ ա էն, որ ասում է թէ՛ Ռիլիջանայ դէսի ճամպէն է վիլի սիրուն ա, քանզ դէնքնը։ Ռէ հմի մը տիկ տու, տէս, ըսկի քու օրումը ըսենց տեղեր տեսել են։

Կամյարեանը, որ արդէն զրաւուած էր շրջապատող տեսարաններով, տիրացուի «դէ հմի մտիկ տու» խօսքի վրայ, լեռ նայեց և տեսաւ, արդարև, մի նոր սկնապարար տեսարան։— Իրենք այդ միջոցին գտնուում էին որոշ բարձրութեան վրայ, իսկ տափարակի ծմակ

ները մնացել էին վար: Բարձրից նայելուց, տեսնուամ էին միայն այդ ծմակների կատարները, որոնց կանաչը արևը վառել էր երգիներանդ գոյներով: Իսկ այդ վառուող մակերևութը նմանում էր այդ վարկենին լայնածառայ մի ծովակի, որի լեզվեղուկ ավիքները փոխարինում էին ծառերի հովից շարժուող կատարները: Այդ տեսարանը այնքան էր սիրուն ու գրաւիչ որ Կամսարեանը տեղը փոխելով՝ նստեց դիմացի նստարանի վրայ՝ որպէս զի կարողանայ աւելի դիւրութեամբ նայիլ և զմայլուիլ գեղեցիկ հեռանկարով:

Չընայելով որ խճուղին սարի լանջովն էր բարձրանում, այսուամենայնիւ, ծառերը հովանաւորում էին նրան: Մեծ մասամբ նա անցնում էր բնական ծառուղիների միջով, որոնց, երբեմն, փոխարինում էին նաև ժայռերի շարքեր: Իսկ դրանց, իւր հերթում, հովանաւորում էին դարձեալ հինաւուրց ծառեր, որոնք բուսած լինելով ժայռերի վերևում, այդտեղից իրենց սաղարթախիտ ոտերը ձգում, տարածում էին ճանապարհի վրայ: Վերջինս յաճախ անցնում էր, նաև, սիզաւէտ բարձունքներով, ուսկից տեսարանները բացւում էին աւելի շքեղ ու ընդարձակ: Այդպիսի դիրքերից երևում էին Մէլդան լեռան անտառասպառ լանջերը և նրա մերկ, ծառազուրկ կատարը, որ, սակայն, պատած էր բաց կանաչ թաւիչով: Նրան հետևում էին ուրիշ շատ լեռներ, որոնք գազաթների բարձրութեամբ մէկը միւսին գերազանցելով՝ հորիզոնը դարձնում էին փառայել:

— Հրէն Սիսիանայ սարերը. բացազանչեց լանկարծ տիրացուն, չըժուժալով, կարծես, որ ուսումնական մարդը այդ վեհափառ տեսարանների առաջից անցնում էր լուռ ու մունջ:

— Որո՞նք են, հարցրեց Կամսարեանը՝ նստելով նախկին տեղը:

—Հրէն, ալ, էն որ կատարնին մշուշակալած՝ լէլթէ (կարծես) լաղ են անում (ծաղրում են) մնացած սարերին, տենում չես:

Այս խօսքերով ցոյց տուաւ տիրացուն Սիւնեացաշխարհի կապուտակ լեռները, որոնց կատարներն, արդարև, ծրարում էին ամպերի մէջ:

Կամսարեանը դիտում էր լեռներով ծածկուած այդ հորիզոնը խորին հիացմունքով:

—Քիչ վախ եղբէս ա հաւատարիլ դենք նրանց, չուն էս ճանապարհը բանցրանում ա Մայմեխը վեր տասնըհինգ վերստ, աւելացրեց տիրացուն:

Բայց նրա շօք վախտը շատ էլ շուտ չանցաւ անթիւ կեռամաններով վերելքը աւելց մօտ երկու ժամ:

Եւ սակայն Մայմեխի ամենաբարձր լանջերին հասնելուց, արդարև, ուղևորներին թուում էր թէ՛ իրենք հաւասարուել են Սիւնեաց լեռների բարձրութեան:

—Տենում ես, ազա, հրէս հաւասարուեցինք: Բա էլ Սիսիանը խճ ա լաղ անում մեր Մայմեխի վրայ, զուարճախօսեց տիրացուն:

—Չենք հաւասարուել, քեզ այդպէս է թուում, պատասխանեց Կամսարեանը:

—Ո՞նց թէ հաւասարուել չենք. հրէս քթիս թուշովը (ուղղութեամբ) որ մտիկ եմ տալի, ասես, իմ գլուխն ու Սիսիանայ գլուխը մի չուանի են դրած:

—Այդպէս կերևայ միշտ հեռուից, բայց եթէ անցնես քո և դիմացի սարի մէջ տեղը գտնուող տարածութիւնը, կը տեսնես որ սարը հետզհետէ բարձրանում է, բացատրեց երիտասարդը:

—Դ՛հէ (այդպէս) բան էլ կայ:

—Հապա:

—Բա էդ խճ դհենց ա ըլում, հետաքրքրուեց տիրացուն:

—Նրա համար որ երկիրը կուր է և այդ պատ-

ճորով էլ քանի սարը հեռու է լինում, այնքան էլ նա փոքր է երևում. որովհետև հեռուից մենք տեսնում ենք միայն նրա վերին մասը: Իսկ յետոյ՝ որքան մոտենում ենք, այնքան նա մեծանում է, որովհետև հեռոցհեռե տեսնում ենք նրա միջի և սպա վարի մասերը:

Տիրացուն այս բացատրութիւնից ոչինչ չը հասկացաւ, բայց երկրի կոլոր լինելովը հետաքրքրուեց:

— Ասում ես երկիրը կլոր աս:

— Հա՛:

— Եանի (այսինքն) ո՞նց ա կլոր, տափակ թաքախի (խան) նման թէ կլոր ձմերուկի:

— Կոլոր ձմերուկի:

— Բա էդ ո՞նց կլլի, զարմացաւ տիրացուն.

— Այդպէս է, կրկնեց Կամսարեանը:

— Ա՛ խէ, գիտում չես որ դ՛հենց աս. մէջ մտաւ:

Օվանէսը:

Վերջինի միջամտութիւնը գրգռեց տիրացուին:

— Սրան մտիկ տու. լէլի ինքը գիտում ա, նկատեց նա խէթ խէթ նայելով կառապանին:

— Բա գիտում չեմ... վստահօրէն հարցրեց Օվանէսը:

նէսը:

— Դէ որ գիտում ես, ասա՛ տենեմ ո՞նց ա կլոր:

— Հրէն աղան առեց էլի, ձմերուկի նման կլոր ա:

— Ա, զա՛շ, ձմերուկի նման որ կլոր ըլի բա թոլ չի լիլ (չի գլորուիլ) ծովն ընկնիլ:

— Ես ի՞մ... տարակուսեց Օվանէսը, տեսնելով որ նեղ տեղը լծուեցաւ:

Կամսարեանը ծիծաղեց:

— Ի՞ք ես ծծաղում, աղա՛, սո՛ւտ եմ ասում, զարձաւ նրան տիրացուն:

— Ա՛յ տղա, դու կարո՞ղ ես քո բերանի, կամ աչքի մէջն ընկնել, հարցրեց Պետրօսը:

— Բա ոնց կարամ ընկնիլ իմ բերանը:

— Հապա, ծովերն էլ գտնուում են երկրի վրայ. երկիրն ինչպէս կարող է նրանց մէջն ընկնել:

— Երկրի վրայ ծովեր կան, գիտոււմ եմ, հրէս մի-նրն էլ մեր առաջին, Սևանայ ծովն ա, ամա դէ ես էդ ծովերը չեմ ասոււմ:

— Հապա ո՞րը:

— Ասըմեն, աշխարհը որ վերջանոււմ ա, դէնը շատ մենծ, անտակ ծով կայ, որ ըսկի ճոնդ (ծայր) չունի: Հմի որ ասոււմ ես՝ աշխարհը կլոր ա, ես էլ ասոււմ եմ՝ բա խի՞ չի թուլ ըլլոււմ էդ ծովն ընկնոււմ:

Կամասրեանը նորէն սկսաւ ծիծաղել և ապա տեսնելով որ տիրացուն տարակուսած նայոււմ է իրեն, ըսկեց մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ նրան երկրի, լուսնի ու արևի կազմութեան և նրանց շարժումների մասին:

Մօսին ուշադրութեամբ լսոււմ էր նրան և երբեմն երբեմն գլուխը շարժելով ասոււմ:

— Հըլէ տես ինչե՞ր ա ըլէ աշխարոււմ է... փառքդ շատ ըլի, Աստուած—ջան, բա էս խի՞ մեզ ըսենց հայ-վան ես ստեղծել:

— Ա՛ Մօս, ես ընենց եմ 'մացել թէ դու էդ բաները չիմ (բոլորը) գիդոււմ ես. բա էլ ընչի՞ վարժապետ ես որ բան չես 'մանոււմ, նկատեց կառապանը չարախնդութեամբ:

— Ա՛, ես ո՞րդիտն 'մանամ, ես հու խալիս (խկական) վարժապետ չեմ, խոստովանեց տիրացուն իւր տկարութիւնը:

— Բա խի՞ ես ընխանց կարդացնոււմ:

— Անշուր որ կարդացածս 'մանոււմ եմ:

— Ի՞նչ ես կարդացնոււմ, հետաքրքրուեց Կամասրեանը:

— Ինչ որ ձեռք ա տալիս:

—Օրինակ:

—Օրինակ, Սաղմոս, Պարգև—Մանկանց, Մայրենի լեզու, Աւետարան, Եփրեմ—Խորի...:

—Առաջ ո՞րն ես կարդացնում:

—Առաջ «այլ-բենի» տետրը. եգուց ով ինչ գիրքերում ա, նրանից էլ սկսում եմ:

—Ինչպէս. ամեն մէկը մի ջուկ գրքի վրայ է կարդում:

—Բն:

—Ինչո՞ւ ամենքին մի տեսակ գրքի վրայ չես կարդացնում:

—Էդ ո՞նց կըլի: Ընենց մարդ կայ որ տանը սաղմոս ունի. ընենց մարդ էլ կայ որ Պարգևմանկանց ունի. եա չէ, Աւետարան, եա Մայրենի լեզու. բերում ա հու ստում. վարժապետ, քե մատաղ, բեխին էս գիրք կարդացրու, հաղիր տանն ունենք, մին էլ վեր չըկենամ գնամ Դիլի, եա Բւան, նոր մէկէլանց գիր առնեմ. աղքատ մարդ եմ. կարալ չեմ գրի փող տալ...:Ես էլ վեր եմ ունում էն գիրը կարդացնում:

—Հապա քո աշակերտները ոչինչ չեն հարցնում քեզ երկրի, ծովերի կամ այլ այդ տեսակ բաների մասին:

—Պատահում ա որ հարցնում են:

—Էհ, դու ինչ ես պատասխանում:

—Ինչ որ մանում եմ:

—Իսկ դու բան չես իմանում:

—Դէ չիմացած վախտն էլ սողաշարով (քանոնով) գլխին տալիս եմ հու ստում. լէնդ կարի դասդ սըւրբի, էդ քու ինչ մանալու բան ա, որ հարցնում ես». էն ա խեղճն էլ գլուխը քաշ ա գցում գիրը կարդում:

—Ս, քու հերը լիս դառնայ, ախիլ (խկական) վարժապետը դու ես, որ կաս, նկատեց Օվանէսը ծիծաղելով:

Բայց այս անգամ արդէն Կամսարեանը չըծիծաղեց. նա սկսաւ մտածել լսածների մասին և տեսաւ որ դըրանք շատ ցաւալի են: Այս առթիւ, գուցէ, նա, մինչև անգամ, տխրէր, եթէ մի փոքր աւելի խորասուզուէր իւր մտածմունքների մէջ, եթէ խորհէր այն մասին թէ՛ ինչ թշուառ դրութեան մէջ պիտի գտնուի մի ժողովուրդ, որի առաջաւոր մարդը—տիրացուն, կամ վարժապետը խարխափում է այս աստիճան տգիտութեան մէջ: Բայց տեսարանների լանկարծական փոփոխութիւնը նորէն գրաւեց նրա ուշադրութիւնը: Օվանէսի կառքը քերում էր այժմ Մայմեխի կատարը և հին Գուգարաց սահմանն անցնելով՝ մտնում Սիւնեաց գաւառամասը: Այստեղ արդէն հետզհետէ նուազում էին անտառներն և սպառում մացառուտը. իսկ գրանց փոխարինում էին սիգաւէտ լեռնադաշտեր և դեղեցիկ մտրմանդներ, ուր խոտը գունաւորուած երփներանգ ծաղիկներով ծածանում էր կանգնաչափ բարձրութեամբ: Լեռնային հովերը խաղում էին այդ գալարագուարճ մարգերում քաղցր ու մեղմաշունչ. իսկ արևի շողերը ոսկեզօծում կանաչը ոչ թէ նրանց ջերմացնելու այլ փայլեցնելու չափով: Երիտասարդն իւր օրում չէր տեսած այսպիսի ճոխ ծաղիկ ու կանաչ: Նա հիացած նայում էր աջ ու ձախ և ինքն իրեն մտածում.

—Ափսոս, ինչո՞ւ բնութիւնը այսպիսի բարձրութեան վրայ է հանել այս հրաշալի արօտները: Միթէ գեղջուկի հօտերն ու նախիրը կարո՞ղ են երբ և իցէ օգտուել նրանցից: Բայց հաղիւ անցան մի քանի ըոպէներ, և ահա նա տեսաւ որ հեռուում խոտը շարեշար հարել ու փռել են գետնին ցամաքեցնելու համար:

«Ուրեմն այս բարձրութեան վրայ էլ մարդիկ են ապրում: մտածեց նա և իսկոյն լիջեց իւր «աշխատասէր և ճակատի քրտինքով ապրող» ազգակիցներին:

Մի փոքր էլ առաջանալով՝ նա տեսաւ խմբակներ մարդկանց ու կանանց, տղաների և աղջկանց. որոնցից ոմանք լեռնալանջերի վրայ, միւսները՝ լեռնահովտում, կամ ցամաքած խոտն էին հաւաքում, կամ սալլերի վրայ բարձում, իսկ աւելի փոքրիկները՝ խաղում ու վազվզում էին կանաչ արօտներում:

Երիտասարդը հետաքրքրութեամբ դիտում էր այդ շարժուն բազմութիւնը և աշխատում ծանօթանալ այդ տեղի հայոց տիպերին: Բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ տիրացուն բացատրեց՝ որ դրանք հայեր չեն, այլ մալականներ—Սիմեօնովկայ գիւղից:

Իրաւ է, Պետրոսը գիտէր որ Սիմեօնովկան առօրինակ կայարանն է. և Սիւնեաց սահմանակից այդ սարերի վրայ՝ կարելի էր երևակայել մի փոստային կայարան. բայց մալականների մի բազմամարդ գիւղ՝ նա չէր սպասում տեսնել: Եւ ինչ հրաշալի հովիտներ, մարգեր ու մարմանդներ էին շրջապատում այդ գիւղացիներին. ինչ շքեղ արօտներ, ինչ լորդառատ աղբիւրներ, որոնց մասին պատմում էին Մօսին ու Օվանէսը: Դա, արդարեւ, մի լեռնային դրախտ էր:

Երբ նրանք հասան կայարանին, համարեանը հաճոյքով սկսաւ դիտել աւանը, որ անքի էր ընկնում իւր լայնադիր փողոցով և նրա ուղղութեամբ շինուած կոկիկ, մաքուր ու սպիտակ տնակներով: Իրանցից շատերի առաջ գտնւում էին փոքրիկ ծաղկանոցներ, ուր նարգիսի, նարնջածաղկի և շահսպրամի հետ միասին փթթում էր մայլեսեան վարդ, թէպէտ յուլիսը վերջանալու վրայ էր: Տներից քիչ հեռու ձգւում էին բանջարանոցներ, կաղամբի և գետնախնձորի ցանքսեր ու արևածաղկի ընդարձակ աճուներ: Աւելի հեռուն՝ տարածւում էին գիւղացիների հարուստ արտերը: Աւանի բնակիչները՝ շրջապատող բնութեան նման՝ ուրախ, զբւարթ և կենդանութեամբ լի մարդիկ երևացին համ-

սարեանին. նա սիրով պատասխանեց նրանցից մի քանիսի քաղաքավար ողջունին և սիրով էլ կըլսուէր նրանց հետ, եթէ Օվանէսն իւր ձիերի շնորհքը մալահաններին ցոյց տալու նպատակով չըթոնցնէր նրանց գիւղի միջով, ինչպէս արագաթե թռչունների:

Եւ որովհետեւ Պետրոսը փափազում էր Սեանը վայրկեան առաջ տեսնել, ուստի Օվանէսի եռանդը չուզեց չափաւորել: Նա գոհ եղու Սեմեօնովնայի վրայ մի վերջին հայեացք ձգելով և ինքն իրեն մտածելով:— Ընթէ սա է գգիւղ՝ կոչուածը, ապա ուրեմն, կարելի է թէ ապրել և թէ գործել սրա մէջ:

Սեմեօնովկայից ճանապարհը սկսում էր փոքր ինչ ցածրանալ, իսկ բնութեան շքեղութիւնները նուազում էին: Մի քանի կանաչկոտ բլրակներ անցնելուց լետոյ՝ երևացին Ձիբուխլուի աղքատիկ ցանքսերը՝ հարուստ սևահողի վրայ: Կամսարեանը հենց նոր սկսել էր դիտել նրանց և զարմանալ այս տարօրինակ հակադրութեամբ, երբ մի նոր ու շքեղ տեսարան գրաւեց նրա ուշադրութիւնը: Նրա աչքերի առաջ բացուեցաւ լանկարծ մի բաց-կասուտակ դաշտ, որին նա սկզբում հորիզոնը փակող մշուշ կարծեց: Սակայն տիրացուի «հա՛ծովը» բացազանչութիւնը սթրիփեցրեց նրան: Նա, ուրեմն, հասել էր Հայաստանի բնութեան հրաշալիքներից մինին— պատմական Գեղամայ ծովակին: Եւ եթէ սկզբում նա չը կարողացաւ զուշակել թէ իւր տեսածը, իրօք, Սեանն է, նա իրաւունք ունէր, որովհետեւ հեշտ չէր հաւատալ թէ լեռների այդ բարձրութեան վրայ կարող է գտնուիլ այսքան ընդարձակ մի լիճ, որին, իրաւամբ, ծովակ անուն են տուել: Իրաւ է, Պետրոսը աշխարհագրութիւնից գիտէր որ Սնտեան լեռները, Սլպեան ու Ձուիցարական բարձրաւանդակները շատ այդպիսի գեղեցկութիւններ ունին, այսուամենայնիւ, իւր հայրենիքին այդպիսի շքեղութիւն լատկացնելը չափա-

դանցութիւն էր համարում: Բայց այժմ, ահա, նա տեսնում էր Սևանը իւր անաջ փռուած, տարածուած 6—7000 ոտք բարձրութիւն ունեցող լեռների վրայ: Եւ ինչպէս չը հրճուէր, ինչպէս իւր հայեացքը չը յափշտակուէր նրանով... Կամսարեանը բարձրացաւ իւր նստարանից և կառքի մէջ կանգնելով՝ սկսաւ դիտել ծովակի սիրուն մակերևոյթը, որի կապուտակը շարունակ փոխուում էր՝ առնելով երբեմն պարզ փիրուզի, իսկ երբեմն գորշ մշուշի գոյն, նայելով թէ կա՞նքն ինչ ուղղութեամբ էր ընթանում: Բաւական տեղ այսպէս նա կանգնած էր կառքում, մինչև որ վերջինս սկսաւ մօտենալ Ձիբուխլուին: Այստեղից էլ ծովակը թւում էր անշարժ և միապաղաղ: Միայն նրա պայծառ հայելու վրայ նշմարուում էին հեռզհեռէ բաց-կապտագոյն ժայպաւէններ, որոնք հոռանուտի սահմաններն էին ակնուում: Շուտով երևաց և Սևանի կղզին, որի տեսքը հեռուից թէպէտ չոր ու ցամաք, այսուամենայնիւ Կամսարեանին հետաքրքրեց յուզելու չափ, որովհետև անցեալից լիշեցրեց նրան գէպքեր, որոնք կապ ունէին Սևան անուան հետ:

Մինչդեռ երիտասարդը սրտայուզ դիտում էր կղզեակն ու ծովը և նրանց շրջապատող լեռների տեսարանը, Օվանէսը կանգնեցրեց կառքը և հարցրեց.

— Ա՛ղա, ո՞ր դի գես վեր գալ:

— Ինչպէս թէ վեր գալ, զարմացաւ Կամսարեանը:

— Բա ըստի չե՞ս մնալու:

— Այստեղ ինչո՞ւ մնամ, Ձիբուխլու պիտի գնանք:

— Սրանէ լաւ Ձիբուխլու կըլ՞ի, նկատեց կառապանը ծիծաղելով:

— Ո՞րը, սա՛, հարցրեց Կամսարեանը, զարմացմամբ ջուրջը նայելով:

— Հա՛, աղա՛, սա՛ ա մեր գեղը, հաստատեց տիրացուն՝ ինքնագոհ ժպտալով:

Կամսարեանը լանկարծակի եկածի նման մի վայր-
 Կեան մնաց անխօս. ապա նորէն սկսաւ իւր շուրջը
 նայել՝ տեսնելու համար այն, ինչ որ տիրացուն պիւրջ
 էր անուանում:

Տեղն, ուր կանգ էր առել կառքը, շինամիջով ան-
 ցնող խճուղին էր, որ դեղնագոյն ժապաւէնի նման ա-
 կօսում էր գիւղամիջի սեւահողր: Թւում էր թէ՛ դա-
 միակ մաքուր տեղն է այն բոլոր տարածութեան
 վրայ, որ գիւղի շրջագիծն ամփոփում էր իւր մէջ: Վասն
 զի, միւս բոլոր տեղերում, գետինը ծածկուած էր աղբի
 շերտերով և աթարի (քակոր) փշուրներով, որոնցից նա
 խանձուել, սև գոյ՛ էր առել: Այդ ընդարձակ աղբիւսի
 վրայ՝ փողոցների փոխարէն՝ ընկած էին ինչ որ ծուռ
 ու մուռ անցքեր, իսկ դրանց երկու կողմերում ցրուած
 էին անկարգ ու շեղ ուղղութեամբ թմբաձև, հողա-
 ծածկ բարձրութիւններ, որոնց մի կողմերը կալած լի-
 նելով գետնին, միւսները բարձրանում էին խանձաքա-
 րերով շինուած ցածուն պատերի վրայ: Իրանք գիւղա-
 ցիւների տնակներն էին, որոնք, սակայն, չէին նմանում
 մարդկային բնակարանների: Որովհետև մեծ մասամբ
 զուրկ էին պատուհաններից, իսկ ելումուտի համար ու-
 նէին մի մի հատ նեղ, ցածուն դռնակներ, որոնցից
 անցնելու համար՝ պէտք էր անշուշտ կորանալ: Լոյսն
 այդ տնակները ստանում էին երգիկներից, որոնցից ա-
 մեն կտուրի վրայ գտնւում էր մի հատ: Այդ տուն հա-
 մարուող խորշերից ոչ մէկի առաջ չէր երևում կանա-
 չի նշույլ: Իսկ գիւղի ամբողջ տարածութեան վրայ չը-
 կար մի հատ ծառ և ոչ իսկ մի թուփ: Իրանց փոխա-
 րէն աչքի էին ընկնում գարշահոտ քակորի բլրակներ,
 որոնցից ամեն տուն ունէր մի, կամ երկու հատ՝ փառ-
 քով բազմեցրած սէփհական բակում, կամ տան կողքին
 գտնուող ազատ գետնի վրայ:

Գիւղի ընդհանուր տեսարանը այնպիսի տխուր ու
 ԼՈՒՄԱՅ

վհատեցուցիչ ազդեցութիւն էր անում, որ Կամսարեանը քիչ առաջ անցած Սեմեօնովկան սրտ հետ համեմատելով՝ չէր ուզում հաւատալ թէ՛ ինքն իսկապէս գտնուում է գիւղի մէջ, այն էլ Չիբուխլուի, որի անունն այնքան անգամ լսել էր ճանապարհին: Ուստի իւր տարակուսանքը փարատելու համար երկրորդ անգամ հարցրեց թէ՛ իրօք, սո՞ւ է Չիբուխլուն թէ՞ ոչ:

— Սո՞ւ ա, բա՛: Հրէն, չե՞ս տեսնում մեր Աստուածածինը՞. հին եղջի ա. մի քիչ դէնն էլ մեր գէրի (քահանայի) տունն ա. հրէն ինքն էլ մրօքը չալին տալէն ցան (աթար) ա դարսում: Էն կուսինն էլ տանուտէրինն ա: Ըստիան էլ մի քիչ որ աշմիշ ըլենք, շէնի աղբիւրն ա, լաւ ջուր ունի, շատ, Մարալինջի տակիցն ա գալիս: Մի քիչ դէնն էլ Բալղշայն ա: Ծովն էլ հուամենն օր առաջին ա: Մին խօսքով լաւ գեղ ա. տեսնիլու բաներ շատ ունի. հրէդ ման կըգաս կըտեսնես:

Կամսարեանը լսում էր տիրացուին և այքերը մեքենայաբար դարձնում դէս ու դէն, առանց, սակայն, ուշադրութիւն դարձնելու նրա ցոյց տուած տեղերի վրայ: Որովհետեւ այդ վայրկենին նրան զբաղեցնում էր այն միտքը թէ՛ եթէ, իրաւ, սո՞ւ է հալ գիւղացու բնակավայրը, ապա հազիւ թէ հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ ու գործել: Եւ, սակայն, չնայելով այդ կանխահաս վհատութեան, նա որոշեց մտնել այդ գեղացու կոչուած աւերանոցը, գոնէ, որոշ չափով նրան ճանաչելու և ուսումնասիրելու համար:

Տիրացուի խորհրդով և Կամսարեանի համաձայնութեամբ Օվանէսը կառքը քշեց դէպի տանուտէրի տունը: Գիւղի շները, որոնք սովոր էին լուութեամբ նայելու խճուղին անցնող ճանապարհորդներին, մեծ աղաղակ բարձրացրին գիւղը մտնել համարձակող կառքի և ձիերի դէմ, համարելով այդ անսովոր մի բան: Տիրացու Մօսին, իբրև ծանօթ անձն, իւր սաստող հրաման-

ներն արձակեց շների դէմ, մի քանիսին, մինչև ան-
գամ, յակննէ անուանէ կանչելով. բայց ոչ մէկը նրան-
ցից չըլարգեց տիրացուի հրամանը, մինչև որ մօտակա
խրճիթներէն մէկէն դուրս վազեց մի ժիր ծերուկ և
իւր երկարաբուն մահակով ցրուեց աղմարարներին:
Կառքը կանգ առաւ տանուտէրի տուն առաջ:

Թ.

— Աղջի, քեօխվէն տանն ա, հեղինակաւոր ձայնով
հարցրեց Մօսին՝ տարօրինակ հագուստներով և գլուխը
փաթաթած միջահասակ մի կնոջ, որ կանգնած էր բա-
կում:

Վերջինս առանց ձայն հանելու ձեռքով հովանի
արաւ աչքերին, իբրև թէ դէմքը ծածկել ուզելով, ա-
պա երեսը մի կողմը ծռած, շարժեց գլուխը բացասա-
կան կերպով, որ կընշանակէր թէ՛ տանը չէ:

— Բա ո՛ր ա:

Կինը ձեռքի շարժումով ցոյց տուաւ գիւղի դուր-
սը, որ կընշանակէր թէ՛ հանդումն է: Բայց, միևնույն
ժամանակ հասկանալով որ նորեկը, անշուշտ, հիւր պի-
տի լինի իրենց, մօտենալով դրան առաջ խաղացող տը-
ղային, նրա բերանով խնդրեց որ լաղան՝ շնորհ՝ անէ
կառքից իջնել, մինչև որ ինքը մարդ կուղարկէ ամուս-
նու ետեկից:

Կամսարեանն իջաւ: Մօսին ու Օվանէսը վար ա-
ռին կառքից նրա իրեղէնները: Իսկ մինչև այդ, գեղջ-
կուհին ներս վազեց տուն և բերելով այդտեղից մա-
քուր գորգ, փռեց սրահում դրուած տախտի վրայ: Ա-
պա Մօսու միջոցով խնդրելով հիւրին՝ հանգստանալ
այդտեղ, ինքն շտապեց հարեաններից մէկին ուղարկել
իւր մարդու ետեկից:

Երիտասարդը մի վայրկեան գիւղի՝ իւր վրայ ա-

րած տպաւորութիւնը մտածնալով՝ սկսաւ հետաքրքրուել նշանացի խօսող կնոջ անձնաւորութեամբ: Նա սկզբում նրան համրի տեղ էր դրել: Բայց յետոյ տեսնելով որ խօսում է աղալի և ապա Մօսու հետ, հարցրեց վերջինիս այդ մնջակատակի պատճառը:

— Ձահիլ կնանիքը անխօս են ըլլում ըստեղ, պատասխանեց տիրացուն:

— Ի՞նչ է նշանակում անխօս լինել:

— Նշանակում ա որ նրանք չըպէտք ա իրանցից մեծերի, եա պարիբ օտար մարդկանց հետ խօսան:

— Ինչո՞ւ:

— Ամօթ ա:

— Ի՞նչպէս թէ ամօթ է, զարմացաւ Կամսարեանը:

— Բա ջահել կնիկը որ չանէն (ծնօտը) ցցի իրանից մեծի հետ զրից անի, ամօթ չի:

— Ձէ, ինչո՞ւ է ամօթ լինում:

— Էս երկրումն ամօթ ա:

— Ինչո՞ւ:

— Ես իմ. վաղուցուայ դրած աղաթ (սովորութիւն) ա:

— Իսկ քեզ հետ ինչո՞ւ էր խօսում:

— Ինձ, միթօմ, մեծի տեղ չի գցում, պատասխանեց տիրացուն, կարծես, վիրաւորուած:

— Ուրեմն, կըցանկանայիր որ քեզ հետ էլ չըխօսէր:

— Բա խի՞ չի ցանկանալ. մարդ չի ուզիլ որ պատիւ տան իրան:

— Դա պատիւ է:

— Պատիւ ա, բն:

Կամսարեանն այս նորութիւնը լսում էր զարմանալով և չէր կարողանում հասկանալ թէ՛ ինչպէս կարելի է պահանջել՝ որ մարդ արարածը չըխօսէ իւր նմանի հետ, կամ թէ այդ խօսելը համարէ ամօթ, պա-

տիւ, կամ անպատուութիւն: Այդպիսի ըմբռնումներ չէին կարող ունենալ, նոյն իսկ, Աֆրիկէի վայրենիները. իսկ սրանք հօ, համեմատաբար, քաղաքակրթուած երկրի բնակիչներ էին, հետեւապէս և պէտք է ազատ լինէին այդպիսի վայրենութիւնից: Բայց և այնպէս, փաստը իւր առաջին էր: Նա տեսնում էր մի կին, առողջ կազմուածքով, գործելու կարող, ընտանիքին պիտանի և, սակայն, զրկուած Աստուծոյ տուած մեծագոյն բարիքից — խօսելու ազատութիւնից և այդպիսի մի անհեթեթութեան իրաւունքը պաշտպանում էր գիւղի գրագէտ մարդը:

Երիտասարդը դեռ զբաղուած էր այս մտածութեամբ, երբ վերջինս շնորհակալութիւն անելով նրան՝ իւր արած բարութեան համար, առաւ իւր աղքատիկ կապոցը և հեռացաւ, խոստանալով դարձեալ գալ «աղալի» կոչին, երբ սա կը՛րամայէ:

Մի փոքր լստոյ ներկայացաւ կառապան Օվանէսը և խնդրեց նրան՝ մուրախաստ անել (արձակել) իրեն:

— Ի՞նչ, դու վերադառնում ես, հարցրեց Պետրոսը:

— Հրամե՛լ էք, աղա:

— Մեղք չէ՞ն ձիերդ, ինչո՞ւ չես հանգստացնում նրանց:

— Հրէս գնամ Սիմօնովիումը կորմ կրտամ, ընտեղ էլ կը հանգստացնեմ:

— Ինչո՞ւ այտեղ չես տալիս:

— Ըստեղ դժուար ա:

— Ինչո՞ւ է դժուար:

— Ապուռ (կեր) չըկայ. էլաճն էլ թանգ ա:

— Իսկ այնտեղ աժան է:

— Աժան ա, բա՛:

— Ինչո՞ւ է այդպէս:

— Ընդուր որ ըստեղ հայեր են ապրում, ընդեղ՝ մայրականներ:

—Այդ քնչ է նշանակում:

—Էդ էն ա նշանակում որ հայերը օջիղ (տկար) մարդիկ են, էնքան են կարում վար ու ցանք անել որ մենակ իրանց ա հերիք գալի: Թէ որ նրանցից մինն էսօր ինձ մի կող (չափ) գարի ծախքի. էգուց ինքը պտի փող տայ մալահանիցն առնի: Ամա դէ մալահանը զհէ չի. նա համ փող ունի, համ դօշաղ ա, համ էլ բանի ղայդան (եղանակը) գիտում ա: Վարն էլ ա շատ անում, խոտն էլ ա շատ հարում, նհենց (այնպէս) որ, իրան էլ ա հերիք գալի, ուրիշին էլ:

Կամսարեանի գաղափարը հայ գիւղացու արժանիքների մասին արդէն փոխուած էր, կառապանի բացատրութիւններն էլ պակասը լրացրին: Ուրիշ անգամ, գուցէ, նա ուշադրութիւն չըդարձնէր այդպիսի խօսքերի վրայ, բայց այս անգամ, նոյն իսկ, լուրջ մտածութեան առարկայ դարձրեց նրանց:—«Իրաւ, եթէ մի գիւղ՝ իւր տնտեսական կարողութեամբ՝ այնքան է ողորմելի որ մինչև անգամ մի կառապան դժուարանում է այդտեղ իւր ձիերը կերակրել, միթէ սա չէ նշանակում թէ՛ նրա բնակիչները այնքան են ծով, անհոգ ու անշնորհք որ նրանց մէջ ապրել ու գործելը ոչ միայն դժուար, այլ և անհնարին է...»:

Այսպէս մտածեց երիտասարդը և իւր վերջին հետեւութիւնը՝ փոխանակ նրան տխրեցնելու, ընդհակառակը, պատճառեց մի թագուն հաճոյք, որը, ըզխում էր այն նորածին մտքից թէ՛ գուցէ տեղական հանգամանքներն ստիպեն իրեն, հակառակ իւր կամքին, դըրժել իւր ուխտին: Եւ այն ժամանակ գա կըլինէր մի յաջողութիւն, որ ինքը չէր պտրել... Սակայն այդ հաճոյքը նա չըվայելեց լիովին. վախենալով թէ՛ մի գուցէ ինքն սխալում է՝ շտապով այդպիսի կարծիք կադմելովը. թէ գուցէ հայ գիւղացին դեռ ունի համակրելի կողմեր, որոնք տակաւին անծանօթ են իրեն և որոնց

պատճառով, գուցէ, մի օր իւր խիղճը բողոքէ իւր գէմ, եթէ ինքն այսօր կայացնէ մի սխալ որոշում:

Իսկ այդ երոշումը... Ոչ. նա դրա համար դեռ չի մտածել. չէ կարող մտածել...: Ինչ, դուք կարծում էք թէ նա անհնարին դանելով հայ գիւղում ապրելն ու գործելը, կորոշէ ձգել ու հեռանալ. ոչ. այդպիսի քան չի անիլ: Իրա նման մի միտք, այո՛, անցաւ նրա գլխով, երբ կառապանը խօսում էր, բայց դա միայն մի ցուք էր, մի չնչին ասուպ, որ վայրկենաբար փայլեց իւր մտքի աշխարհի հորիզոնի վրայ և անհետացաւ: Իսկ այնուհետև նրա հոգու աչքերը դարձեալ մնացին սևեռած այն լուսաւոր աստղին՝ որի վրայ գըրուած էր՝ հայ գիւղացու բարօրութեան համար աշխատելու իւր հաստատուն վճիռը: Եւ նա շարունակ կընայէ այդ աստղին, ընտրած ճանապարհից չըջեղուելու համար: Իսկ առ այժմ... առ այժմ կաշխատէ ճանաչել գիւղը, նորից լսել, տեսնել, քննել, հետազոտել... Անշուշտ նա դեռ շատ բան չըզիտէ և, գուցէ, հենց այդ չըզիտածներն են, որոնք նորից պիտի ոգևորեն իրեն...: Այսպէս էր խօսում երիտասարդ Կամսարեանի երկու ճես-երից մինը մինչդեռ միւսը՝ կարծես, սիրով սպասում էր որ նոր լսածն ու տեսածը, քըննածն ու հետազոտածը հաստատեն դարձեալ այն, ինչ որ կայ, ինչ որ մինչև այդ երևան էր եկել...:

Այս պատճառով նա հանգիստ սրտով վճարեց կառապանին իւր հասանելիքը և ճանապարհ դրաւ նրան:

ՄՈՒՐԱՅԱՆ

(Կը շարունակուի)